

ԵՐԱԿՐՈՆԵԱՆ


ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՏԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԸ

Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցը



Ապրիլի 24-ի առավոտյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգեւորականաց դասի ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ եւ ներկայությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ու պետական ավագանու՝ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Հայոց եղեռնի նահատակների:

Նույն օրը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում մատուցվեց ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի վանորդի տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը: Արարողության ընթացքում սրբազան հայրը հրապարակեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հայտարարությունը:



Ապա պատարագիչ Արտակ սրբազանն իր քարոզում անդրադարձավ օրվա խորհրդին: «...Ամեն հայի մտքում հրով ու սրով խորագրված անջնջելի պատկեր եւ մշտակենդան



պատմություն է Ապրիլյան եղեռնը: Մեր ժողովրդի դեմ կատարված ցեղասպանությունը լոկ պատմական տեղեկություն կամ ճշգրիտ տարեթիվ չէ, այլ՝ ապրող, բաբախող եւ պատգամող իրականություն: Մեր պատմության սեւ էջերը, դժբախտությունները, ավերն ու կործանումը, գերությունն ու աքսորը, գաղթն ու ջարդը մահվան ստվերով մեզ երբեք չեն ծանրացրել, որովհետեւ կարողացել ենք մեր հոգիները թեթեւ ու պայծառ պահել լուսավոր տեսիլներով, որովհետեւ մենք եղել ենք եւ կանք կյանքին ու լուսին նվիրված ժողովուրդ», - նշեց Արտակ եպիսկոպոսը: «Աստված կոչում է մեզ զինվելու, զինվելու՝ ներքնապես, հոգեպես եւ

հոգեւորապես, եւ այսօր օրն է, որ բոլորս լսենք այդ հրավերը, հրավերը՝ սթափվելու, արթնանալու, զգաստանալու, ներքնապես զորանալու եւ պատրաստվելու այն անդուլ եւ անխոնջ պայքարին, մտքի եւ հոգու բախումին, որ անհրաժեշտ է արդարության եւ խաղաղության պայքարին զինվորագրվելու, հանուն նրա պայքարելու եւ մարտնչելու համար:

Այսօր այն օր է, սիրելիներ, որ աշխարհի բոլոր հայերը տարբեր կերպերով միաբանվում են՝ մեծարելու հիշատակը նահատակների: Միաբանված են հաղթողների հիշատակի շուրջ՝ ճանաչելով նրանց նվիրումն այն մեծ հավատքին եւ համոզմունքներին, նրանց թողած այն մեծ ա-

վանդին, որը երբեք չկորավ... Այսօրվա մեր այս հավաքը, ինչպես ամեն տարվա մեր հավատարիմ ներկայությունը, դատապարտությունն է անընդունելի այն ոճիրների, որոնք ուղղված են հասարակ մարդ անհատի դեմ, մարդկության դեմ, ուղղված են մեկ կամ ավելի ժողովուրդների դեմ, այդ ժողովուրդների մշակույթի, դրանց անխնա ոչնչացման, մարդկային կյանքի նվիրական արժեքների, սրբությունների ոտնահարման եւ ուրացման դեմ», - պատգամեց սրբազան հայրը:

Պատարագի ավարտին Մայր տաճարի շրջափակում ի հիշատակ 1915 թ. Հայոց եղեռնի նահատակների կանգնեցված Աղոթքի եւ ուխտի խաչքարի մոտ, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

ԹՈՒՐԻԱՅԻՑ ՊԱՇԱՅՈՒՄ ԵՆՔ ՎԵՐԱԳՐՁՆԵԼ ԲՈՆԱԳՐԱՎՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐՆ ՈՐ ԵԿԵՂԵՅԱԳԱՏԿԱՆ ԿԱՎԱԾՔՆԵՐԸ

2015 թ. հայ ժողովուրդը Հայաստանի Հանրապետությունում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում եւ ի սփյուռք աշխարհի նշելու է 100-րդ տարելիցը Օսմանյան Թուրքիայի կողմից կազմակերպված Հայոց ցեղասպանության:

1915 թ. ցեղասպանությանը զոհ գնաց ավելի քան մեկուկես միլիոն հայ, աքսորի ճանապարհներին վերապրած հայերը ապաստան գտան Արեւելյան Հայաստանում՝ ներկայիս Հայաստանի Հանրապետությունում, Սիրիայում, Լիբանանում, արաբական այլ երկրներում ու աշխարհի տարբեր պետություններում:

Անհատական սեփական կալվածքների հետ Օսմանյան կայսրության ենթակայության ներքո գտնվող Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում, ինչպես եւ Թուրքիայի այլ շրջաններում ապրող հայությունը կորցրեց նաեւ եկեղեցապատկան կալվածքներ՝ եկեղեցիներ, սրբատեղիներ, վանքեր, կրոնական, կրթական ու բարեսիրական կենտրոններ, մշակութային ու կրոնական մեծ արժեք ունեցող իրեր՝ խաչքարեր, ձեռագրեր, սրբանկարներ եւ այլն: Ցեղասպանության ենթարկված ու բռնի միջոցներով տեղահանված հայ ժողովրդին պատկանող բոլոր կալվածքները սեփականացվեցին Թուրքիոյ պետության կողմից՝ «լքյալ կալվածքներ» անվան տակ:

Ցեղասպանությունից 98 տարի անց Թուրքիոյ ներկա պետությունը՝ որպես իրավահաջորդը Օսմանյան կայսրության, ոչ միայն մերժում է իր նախորդների ծրագրած ու իրագործած ցեղասպանությունը, այլեւ շարունակում է իր հակահայ քաղաքականությունը՝ բռնագրավված պահերով հայ ժողովրդի կրոնական ու մշակութային արժեքները՝ եկեղեցապատկան կալվածքներն ու իրերը:

Հետևաբար, կոչ ենք ուղղում Թուրքիոյ պետությանը եւ պահանջում.

- 1) Ճանաչել Հայոց ցեղասպանությունը,
- 2) Ամբողջապես հատուցել հայ ժողովրդի կրած կորուստների եւ մարդկային ու ազգային ոտնահարված իրավունքների դիմաց,
- 3) Անհապաղ վերադարձնել հայ ժողովրդին՝ որպես իրավատիրոջ, հայկական եկեղեցիները, վանքերը, եկեղեցապատկան կալվածքները եւ հոգետուր-մշակութային արժեքները:

Աղոթքով հիշելով Հայոց ցեղասպանության զոհերին՝ դատապարտում ենք ամեն բռնարարը՝ ուղղված աստվածապարգեւ կյանքի, մարդու արժանապատվության եւ մարդկության խաղաղ համակեցության դեմ, քանզի «Աստված խոտովության Աստված չէ, այլ՝ խաղաղության» (Ա Կորնթ. 14.33), որ մարդկանց կոչել է սիրո, համերաշխության եւ գործակցության:

Երախտագիտությամբ ենք հիշում բոլոր ժողովուրդներին ու պետություններին, որոնք ցեղասպանության օրերին ապաստան տվեցին տեղահանված հայերին եւ հոգատարություն ու եղբայրական սեր ցուցաբերեցին հայրենագրված ու տարագրված հայերի հանդեպ:

Հայ ժողովուրդը հավետ երախտագետ է լինելու նաեւ այն բոլոր պետություններին, որոնք մարդասիրության եւ արդարության սկզբունքներով առաջնորդված՝ դատապարտել եւ պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

Հայոց ցեղասպանության հարյուրամյակի նախաօրին մեր բոլոր կաթողիկոսներն ի գործ պիտի դնեն՝ միասնաբար իրականացնելու հայ ժողովրդի պահանջները՝ հանուն արդարության եւ հայության իրավունքների պաշտպանության:

ԳՐԵԳՈՐ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՐԱՄ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՊՐԻԼ 24, 2013

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

16 ապրիլի

ԿՏ-ում Բրազիլիայի դեսպանին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Բրազիլիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան տիկ. Մարսելա Մարիա Նիկոլեթտին:

Հանդիպմանը Նորին Սրբությունը հրաժեշտ տվեց դիվանագիտական առաքելությունը Հայաստանում ավարտող դեսպանին՝ իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնելով անցած չորս տարվա ընթացքում կատարած աշխատանքների համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Բրազիլիայի հայ համայնքի եւ Բրազիլիայի հայոց թեմի կյանքին, նշվեց, որ թեմն ու համայնքը կարելի էր կամուրջ են երկու երկրների միջեւ եւ նպաստում են երկուստեք հարաբերությունների ու համագործակցության առավել սերտացման:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաջողություն մաղթեց տիկ. դեսպանին՝ իր հետագա ծառայության մեջ:

17 ապրիլի

ԿՏ-ում Հնդկաստանի դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Սուրեշ Բաբուին: Հանդիպմանը Նորին Սրբությունն իր շնորհավորանքներն ուղղեց Հնդկաստանի դեսպանին՝ նշանակման առթիվ, եւ արդյունավետ գործունեություն մաղթեց նրան Հայաստանում:

Զրույցի ընթացքում խոսվեց երկու ժողովուրդների դարավոր բարեկամական հարաբերությունների, Հնդկաստանում հայ համայնքի պատմական ներկայության, ինչպես նաեւ Կալկաթայի հայ համայնքի եւ Հնդկաստանում հայկական եկեղեցիների ներկայիս վիճակի մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ Կալկաթայի



Մարդասիրական ճեմարանի գործունեությանը՝ այս առնչությամբ շնորհակալություն հայտնելով Հնդկաստանի դեսպանատանը՝ Մայր Աթոռին ցուցաբերվող զորակցության համար: Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ Նոր դեսպանի ջանքերի շնորհիվ Մայր Աթոռի եւ դեսպանատան միջեւ հարաբերությունները կշարունակվեն հատկանշվել նույն ջերմությամբ ու արդյունավետությամբ:

18 ապրիլի

Եվրոպայի խորհրդի գլխավոր ֆարսուղարին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդին:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց Հայաստանում իրականացվող բարեփոխումների գործընթացում Եվրոպայի խորհրդի կողմից ցուցաբերվող աջակցության համար: Նորին Սրբությունը նշեց, որ Հայաստանի ներկայությունը Եվրոպայի խորհրդում մեծապես նպաստում է երկրում ժողովրդավարական գործընթացների ամրապնդմանը, ինչը քրիստոնեական արժեհամակարգի կարելի էր բաղկացուցիչներից մեկն է:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորաբար մտախոհություն արտահայտեց «Հին ապարտության մասին» եւ «Այ-

լընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքների գործադրության առնչությամբ եվրոպական տարբեր կառույցների կողմից առկա զրույցի շուրջում կապակցությամբ՝ ընդգծելով, որ նման պարագաներում հարկ է նկատի առնել տվյալ երկրի առանձնահատկություններն ու կացությունը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց հավատի եւ կրոնի նկատմամբ հասարակության վերաբերմունքին, տարածաշրջանային խնդիրների լուծման եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործում տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների գործադրած ջանքերին, ինչպես նաեւ միջկրոնական երկխոսության կարելի էր դերակատարությանը:

18 ապրիլի

Վրաստանի Լաշին Եկեղեցու սղասավորներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում ուխտավորաբար գտնվող Վրաստանի Լաշին Եկեղեցու առաջնորդ Ջուլեդայե արք. Պազուտոյին, հոգեւոր սպասավորներին ու միանձնուհիներին՝ ուղեկցությամբ Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում եւ Արեւելյան Եվրոպայում Կաթողիկէ Եկեղեցու առաջնորդ Ռաֆայել արք. Մանուկյանի:

Հանդիպման սկզբում Ռաֆայել արք. Մանուկյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց ուխտավորներին՝ շնորհակալություն հայտնելով հայոց հոգեւոր կենտրոնում ջուր Եկեղեցու հոգեւոր սպասավորներին հյուրընկալելու համար:

Այնուհետեւ կաթողիկ ուխ-

տավորներին հայրապետական իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց Նորին Սրբությունը: Շնորհավորելով ներկաներին Հոռմի Սրբազան Զահանայապետ Ֆրանցիսկոս պապի գահակալության առթիվ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Մայր Ա-

թոռի եւ Վատիկանի ջերմ փոխհարաբերություններին:

Զրույցի ավարտին Վեհափառ Հայրապետը Տիրոջ օգնականությունն ու զորակցությունը մաղթեց Կաթողիկ Եկեղեցու սպասավորներին՝ քրիստոսապատվեր իրենց ծառայության արդյունավորման համար:

19 ապրիլի

«Վերածնունդ» միջազգային փառատոնի ժյուրիի անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Վերածնունդ» միջազգային 5-րդ մրցույթ-փառատոնի ժյուրիի անդամներին: Ամենամյա այս մրցույթ-փառատոնն անցկացվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական բարեգործական հիմնադրամի հովանավորությամբ:

Հանդիպման սկզբում ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան Եպս Ժամկոչյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց փառատոնի ժյուրիի անդամներին: Այնուհետեւ աշխարհի տարբեր երկրներից ժամանած երաժիշտներին հայրապետական իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն իր

գնահատանքը հայտնեց «Փյունիկ» հիմնադրամին՝ հանձին հիմնադրամի համանախագահ եւ ազգային բարերար Գաբրիել Ջամբարջի, ինչպես նաեւ մրցույթի կազմակերպիչներին ու ժյուրիի անդամներին՝ միջազգային փառատոնի անցկացման համար ներդրած գովարժան աշխատանքի համար: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ շարունակական

կլինի ավանդույթ դարձած այդ գեղեցիկ նախաձեռնությունը, որի շնորհիվ խրախուսվում է երիտասարդ կատարողների տաղանդը, եւ հարստացվում՝ նրանց փորձառությունը: Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Հայ Եկեղեցու անցած դժվարին ճանապարհին եւ վերջին տարիների ձեռքբերումներին ու առաքելությանը հայ ժողովրդի կյանքում:



Իրանի մշակույթի եւ իսլամական առաջնորդման նախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի եւ իսլամական առաջնորդման նախարար Սեյեդ Մոհամմադ Հոսեյնիի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարարի պաշտոնակատար Հասմիկ Պողոսյանի:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ երկու երկրների միջեւ առկա ջերմ հարաբերություններն առաջընթաց են ապրում եւ գործնական արդյունքներ արձանագրում: Նորին Սրբությունն ընդգծեց նաեւ

երկու երկրների մշակույթի նախարարությունների միջեւ սերտ համագործակցության կարելիությունը՝ նշելով, որ այն նպաստում է երկու ժողովուրդների մշակութային կյանքի փոխադարձ հարստացմանն ու զարգացմանը:

Անդրադառնալով Իրանի հայկական համայնքին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի դեմս Մոհամմադ Հոսեյնիի, իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց Իրանի Իսլամական Հանրապետության իշխանություններին՝ ինչպես հայ ժողովրդի զավակների նկատմամբ ցուցաբերվող ջերմ վերա-

բերմունքի, այնպես էլ հայ հոգեւոր-մշակութային արժեքների, մասնավորաբար եկեղեցիների հանդեպ դրսեւորվող հոգատար վերաբերմունքի համար:

Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց նաեւ Մայր Աթոռի եւ Հայաստանում Իրանի դեսպանատան միջեւ առկա համագործակցությունը մշակույթի ոլորտում:

Զրույցի ընթացքում կարելի էր միջկրոնական երկխոսությունների խթանումը՝ ի բարօրություն մարդկության խաղաղ կյանքի, եւ հոգեւոր կենտրոնների հարաբերությունների սերտացումը:

23 ապրիլի

Պաղարկան նվիրակին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Անդրկովկասում պապական նվիրակ Նորին Սրբազնություն Մարեկ արք. Սոլչինսկուն:

Հանդիպմանը Մարեկ արքեպիսկոպոսն Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց Հոռմի Ֆրանցիսկոս պապի նամակը, որով Սրբազան Զահանայապետը շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ իր ընտրության առթիվ հղված շնորհավորական գրության, ինչպես նաեւ գահակալության արարողությանն անձնապես ներկա գտնվելու համար: «Առանձնակի ուրախություն էր ինձ համար կարո-

ղանալ ողջունել Ձեզ Հոռմում՝ իմ առաքելության գահակալությանը... Անկեղծ եմ շարունակել գործս նաեւ այն բարեկամությունը, որ մենք մի քանի տարի արդեն վայելել ենք», - ասված է Ֆրանցիսկոս պապի նամակում:

Իր խոսքում շնորհակալություն հայտնելով ջերմ գրության համար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերհիշեց իր հանդիպումները Հոռմի Ֆրանցիսկոս պապի հետ ինչպես Արգենտինայում նրա առաջնորդության շրջանում, այնպես էլ Վատիկանում: Նորին Սրբությունը պապական նվիրակի միջոցով Հոռմի պապին փո-

խանցեց եղբայրական իր ողջունները եւ արդյունաշատ գահակալության բարեմաղթանքները:

Զրույցի ընթացքում նաեւ անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եւ Հոռմի Կաթողիկ Եկեղեցու ջերմ հարաբերություններին, մասնավորապես՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ Վատիկանի միջեւ ձեւավորված սերտ համագործակցությանը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Հովակիմ Եպս Մանուկյանը:

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՅԻ (1763-1780)

Սկիզբը՝ թիվ 7

Սիմեոն Երեւանցիի հիմնավոր քայլեր ձեռնարկեց՝ Մայր Աթոռում կարգ ու կանոն հաստատելու համար: Հատկապես ուշադրություն է դարձնում արձանագրություններին ու հիշատակագրություններին՝ կանոնավորություն հաղորդելով գործողություններին եւ փաստելով իրադարձությունների հիշատակն ու նպատակը: Մանավանդ վավերագրերի պահպանության եւ դրանց ինչ լինելու հարցում կատարյալ քառու էր տիրում: «Գաւազանագիրքը», որ ավելի վաղ հաստատել էր Շամախեցին, ընդհատվել էր, ուստի կաթողիկոսը դպիր Դուկիանոս Աշտարակեցուն հանձնարարեց շարունակել այդ գործը: Նվիրակությունների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու աշխատանքը հանձնարարվեց Երեմիա Նոտարին: Նա պետք է նշանակեր յուրաքանչյուր թեմի նվիրակին, հետեւեր գործունեության արդյունավորությանը եւ լուծեր դրա հետ կապված խնդիրները: Կազմվել է արդյոք նվիրակությունների կանոնագիր, հայտնի է: Թերեւս, Սիմեոնը հանձնարարել էր Եփրեմ Զորագեղուն կազմած «Շարակարգեալ ցուցակ պաշտօնի եւ պատուիրանաց» փաստաթուղթը շարունակել: Շատ կարելու էր Հովհաննէս Գեղամացի դպիրի պատրաստած «Յիշատակա-

րանը», որի մեջ ժամանակագրական կարգով տրվում էին ստացված եւ առաքված նամակները՝ պատշաճ տեղեկություններով, բացատրությունների հավելվածներով, որը տեղ գտավ Գյուտ Աղանյան ավագ քահանայի հրատարակած «Դիւան Հայոց պատմութեան» հատորներից մեկում: Այս հիշատակարանին կից էր դեռ Շամախեցու օրոք սկսված «Մեծ տետրը», որում կրկնօրինակվում էին կարեւորագույն փաստաթղթերը: Առաջին բաժնի ավարտից հետո պետք է սկսված լինէր մյուսը, որ կոչվել է «Բոլորագրահամար տետր», սակայն վերջինի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Այդ գործը ձեռնարկվեց 1763 թվի սեպտեմբերի վերջերին, երբ Սիմեոնը վերադարձավ Բագավանից: Այն շարունակվեց մինչեւ 1776 թվականը:

Բայագետից վերադառնալուց անմիջապես հետո Սիմեոնն իր վրա վերցրեց հին պաշտոնագրերը փնտրելու, հավաքելու, Մայր Աթոռի կալվածքների ու իրավունքների, ստացվածքների վիճակը ճշտելու, դրանց վավերական ցուցակը կազմելու գործը՝ յուրաքանչյուր փաստաթղթի վերաբերյալ տալով կարելու բացատրություններ ու տեղեկություններ: Տառացիորեն մեջտեղ բերվեցին փոշու տակ կորած եւ մոռացված կոնդակները, հրովարտակ-

ները, մուրհակները եւ կալվածագրերը: Դրանք դասավորվեցին ժամանակագրական կարգով, որից հետո Երեւանցին գրեց բացատրական հատոր, որը հայտնի է «Զամբռ» անունով: Այդ աշխատության վրա գրված է 1765 թիվը, սակայն չի նշված՝ այն սկսելով, թե՞ ավարտելու տարին է: «Զամբռը» ծագում է ֆրանսերեն «chambre»՝ «սենյակ» բառից: «Զամբռ» է կոչվել, քանի որ նախորդ դարերում Եվրոպայում այդպես էր ընդունված անվանել պաշտոնական դիվանները: Հետագայում camera apostolica (առաքելական սենյակ) էր կոչվում Յոմփ պապական դիվանը: Սիմեոնն այդպես կոչեց իր աշխատությունը՝ հետեւելով Եվրոպային: Այն պարզապես կարող էր լինել «Դիւանագիրք» կամ «Դիւանական արձանագիրք», որ հրատարակվեց Էջմիածնի տպարանում՝ երկարատեւ անհայտությանից հետո: Սիմեոն Երեւանցին իր այդ մեծ գործի շարունակությունը հանձնարարեց իր հաջորդներին: Դժբախտաբար շարունակողներ չեղան: Հարցը հիմնավոր կարգավորվեց միայն Էջմիածնի Սինդոքի հանդես գալով, եւ կազմվեց կաթողիկոսական դիվան:

Նշենք, որ «Զամբռի» առաջին երեք գլուխներում Հայոց Եկեղեցու համառոտ պատմությունն է՝ մինչեւ Մովսէս Տաթեւացի, չորրորդ գլխում խոսվում է Մովսէս Տաթեւացուց մինչեւ Հակոբ Շամախեցին ընկած ժամանակների մասին, եւ տրվում են կաթողիկոսների թվականներն ու հովվապետներն տեւողությունը: Սիմեոնը Լուսավորչից մինչեւ Բարսեղ Անեցի նշում է 61 կաթողիկոսի, իսկ Գրիգոր Պաիվանուց մինչեւ Հովսէփ Սսեցի՝ 27-ի: Ըստ «Զամբռի»՝ Կիրակոս Վիրապեցուց մինչեւ Հակոբ



Շամախեցի եղել է 39 կաթողիկոս, այսինքն՝ բոլորը միասին՝ 127: Մ. Օրմանյանն այդ ցուցակից հանել է մի քանի անուն՝ ստանալով 114: Պատճառը դրանց աթոռակից կամ հակաթոռ լինելն է: Գրիգոր Լուսավորչի աթոռակալությունը եւ Մայր Աթոռի հիմնադրումը միանգամայն իրավացիորեն դրված են 305 թվին՝ հակառակ Մ. Օրմանյանի, որը Գրիգորի ձեռնադրությունը դնում է 302 թվին, իսկ եկեղեցու հիմնադրությունը՝ 303-ին: Աշխատության մեջ կա մի հատված՝ «Վասն Սիմեոն կաթողիկոսի» խորագրով, որը, ամենայն հավանականությամբ, գրվել է ոչ թե նրա դպիրի կողմից, այլ հետագայում, որովհետեւ իրեն լոկ անվամբ կաթողիկոս համարողն իրեն չէր կոչի «այդ շնորհընկալ, առատամիտ, գիտնաշատ, լի իմաստությամբ» եւ այլն, եւ այլն:

Շարունակությունը՝ էջ 5

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ

24 ապրիլի

Սլովակիայի Հանրապետության Տրնավայի երկրամասի նահանգապետ Տիբոր Միկուշին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սլովակիայի Հանրապետության Տրնավայի երկրամասի նահանգապետ Տիբոր Միկուշին՝ ուղեկցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակություն հայտնեց Տրնավայի երկրամասի եւ Արմավիրի մարզի միջեւ ձեւավորվող համագործակցության առիթով՝ վստահություն հայտնելով, որ այն մեծապես կնպաստի երկու ժողովուրդների կապերի սերտացմանը:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց տիար Միկուշին՝ Սլովակիայի Ազգային խորհրդի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման գործում ունեցած մեծ ավանդի համար:

Հանդիպման անդրադարձ կատարվեց երկու երկրների հոգեւոր կյանքին եւ միջեկեղեցական հարաբերություններին:

Ֆրանսահայ մի խումբ երիտասարդների

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց եւ իր օրհնությունը բերեց ֆրանսահայ մի խումբ երիտասարդների՝ ուղեկցությամբ Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու բարերար Սարգիս Պետոյանի:

Նորին Սրբությունը գոհունակությամբ ողջունեց պատանի ուխտավորների այցը հայրենիք եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Ընդգծելով նման այցելությունների կարեւորությունը՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ հայրենի հարուստ մշակույթի եւ սրբազան արժեքների անմիջական ճանաչողությունն ավելի է խանդավառում ու ոգեշնչում սփյուռքի երիտասարդ հայորդիներին՝ զորացնելով նրանց սերն ու նվիրումը հայրենիքի ու եկեղեցու հանդեպ: Իր խոսքում Նորին Սրբությունը մասնավորապես հորդորեց ֆրանսահայ պատանիներին հետեւել իրենց ուսումնառությանը, ակտիվ մասնակցություն բերել ազգային-եկեղեցական կյանքին:

Ամենայն Հայոց Հայրապետը նաեւ իր գնահատանքն ու օրհնությունը բերեց տիար Սարգիս Պետոյանին՝ եկեղեցասեր գործունեության համար, ում ազնիվ բարերարությամբ կառուցվում է Սեւան քաղաքի եկեղեցին:

Հանդիպմանը երիտասարդներն ասմունքեցին, հանդես եկան հոգեւոր եւ ազգային երգերի կատարումներով:



25 ապրիլի

Հովհաննյան դպրոցի սաներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հովհաննյան դպրոցի (Լյու Ջերսի, ԱՄՆ) սաներին՝ Մայր Աթոռի բարերար տիար Հրաչ Թուֆայանի ուղեկցությամբ:

Ողջունելով սաներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց Հովհաննյան դպրոցի տնօրինությանն ու մանկավարժներին՝ աշակերտներին հայրենիք այցելելու հնարավորություն ընձեռելու համար, հաղորդակցվելու սրբություններին եւ ազգային արժեքներին: Վեհափառ Հայրապետը նշեց, որ նման այցերը կարելու խթան են՝ ավելի զորացնելու հայրենիքի նկատմամբ նվիրվածությունը, իսկ հայրենի հողը տեսնելու խանդավառությունը նպաստում է լավագույնս զգալու եւ գիտակցելու հայրենի երկրի սրբությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց երիտասարդ հայորդիներին այդ ոգով եւ գիտակցությամբ ապրել ողջ կյանքի ընթացքում, բարի եւ արժանավոր զավակներ մեծանալ եւ ուժ դառնալ հայրենիքի համար:

Եվրախորհրդարանի՝ Հայաստանի հետ բարեկամության խմբի անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպական խորհրդարանի՝ Հայաստանի հետ բարեկամության խմբի Հայաստան ժամանած պատվիրակության անդամներին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Չաքալյանի եւ Բելգիայի Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ավետ Արնեցի:

Կարեւորելով Եվրոպական խորհրդարանի՝ Հայաստանի հետ բարեկամության խմբի ձեւավորումը՝ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց այն ջանքերը, որ խմբի անդամները ներդրում են հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության եւ Հայաստանի՝ Եվրամիության անդամագրվելու գործընթացի ուղղությամբ:

Ի դեմս խմբի անդամների՝ Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց բոլոր այն կազմակերպություններին, պետություններին եւ անհատ անձանց, ովքեր կարելու ներդրում են բերում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործում: Իր խոսքում Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Հայոց ցեղասպանության համաշխարհային ճանաչումը կնպաստի նաեւ մարդկության կյանքում տեղ գտնող նման երեւույթների կանխմանը:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը հաջողություն մաղթեց Եվրոպական խորհրդարանի՝ Հայաստանի հետ բարեկամության խմբի առաքելությանը՝ նշելով, որ թեեւ այն ուղղված է Եվրամիության եւ Հայաստանի հարաբերությունների սերտացմանը, հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությանը, սակայն դուրս է գալիս այդ սահմաններից եւ համամարդկային բնույթ ստանում՝ ի նպաստ արդար ու խաղաղ աշխարհի կառուցման:



Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գորակցությունն է հայտնել Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարքին

Ապրիլի 26-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գրություն է հղել Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Իզնատիոս Չակկա Իվասին՝ մտահոգություն հայտնելով օրեր առաջ Հալեպի մոտակայքում մարդասիրական առաքելություն իրականացնելու ժամանակ Ուղղափառ Եկեղեցու երկու մետրոպոլիտների՝ Նորին Սրբազնություն Ռոմանոս Իբրահիմի եւ Նորին Սրբազնություն Պողոս Յագիզի առեւանգման առիթով:

Վեհափառ Հայրապետի նամակում մասնավորապես ասվում է. «Խստորեն դատապարտում

ենք բարձրաստիճան հոգեւորականների առեւանգումը: Միջկրոնական լարվածության իրահումը եւ կրոնական անհանդուրժողականության սերմանումը չեն նպաստում տարածաշրջանում իրավիճակի կայունացմանը: Լիափույս ենք, որ հոգեւոր այրերն ազատ կարձակվեն ապահով եւ անվտանգ»:

Նամակում Նորին Սրբությունը նաեւ իր գորակցությունն է հայտնել Պատրիարքին եւ հույս հայտնել, որ քաղաքակրթությունների ու կրոնների երկխոսության ավանդույթներով հարուստ Սիրիայում շուտով կդադարեն հակամարտություններն ու բախումները:

«Հոգեւոր աջակցություն ընտանիքներին» ծրագրի հերթական փուլը

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի աջակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնը ԵՊՀ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր սե-

ղան» հիմնադրամի եւ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համատեղ կազմակերպեց «Հոգեւոր աջակցություն ընտանիքներին» ծրագրի հերթական՝ երրորդ փուլը:

Ծրագրի շրջանակներում ապրիլի 17-19-ը Ծաղկաձորում կազմակերպվեց համաժողով՝ գեներալային հիմնախնդիրների, գեներալային բռնության եւ

հայրական պատասխանատվության վերաբերյալ, որին մասնակցեցին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հայաստանյան թեմերի ներկայացուցիչ քահանա հայրեր եւ ԶԿԿ տարածաշրջանային պատասխանատուներ:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոն

«Վանական կյանքը Հայ Եկեղեցում» խորագրով սիմպոզիում Չալցբուրգում



Ապրիլի 15-16-ին Ավստրիայի Չալցբուրգ քաղաքում տեղի ունեցավ «Վանական կյանքը Հայ Եկեղեցում» խորագրով սիմպոզիում՝ նվիրված հայ վանականության անցյալին եւ ներկա մարտահրավերներին: Կոնֆերանսը կազմակերպել էին Չալցբուրգի համալսարանը, «Պրո-Օրիենտե» կազմակերպությունը եւ Չալցբուրգի Բենեդիկտյան միաբանությունը:

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ

Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ սիմպոզիումին մասնակցեցին եւ գեկույցներով հանդես եկան Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն եւ Արթիկի թեմի առաջնորդ Յովակիմ եպս Մանուկյանը եւ քրեակատարողական հիմնարկների հոգեւոր տեսուչ Ռուբեն աբեղա Չարգարյանը: Միջոցառմանը գեկույցներով հանդես եկան

Նաեւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունից միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Նարեկ արք. Ալեմեզյանը, Երուսաղեմի Հայոց պատրիարքությունից կալվածոց տեսուչ Բագրատ վրդ. Բերքեթյանը եւ Ամերիկայի հայոց Արեւելյան թեմից Դանիել վրդ. Ֆնդիկյանը:

Հայ եւ ընդհանուր վանականության վերաբերյալ գեկույցներ կարդացին Չալցբուրգի համալսարանի պրոֆեսոր Դիտմար Վինկլերը, հայագետ Ժամսին Դուր-Տրագուտը, Ֆրանցիսկյան միաբանության անդամ Յոհաննես Շնայթերը, Բենեդիկտյան միաբանության անդամներ Գոտֆրիդ Գլասները եւ Պաուլուս Կոսին:

Կոնֆերանսին ներկա էին նաեւ Չալցբուրգի արքեպիսկոպոս Արթիգ Կոլբասերն ու Ավստրիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Կիրակոսյանը:

Հայ Եկեղեցու ծիսական հարցերի հանձնախմբի հանդիպումը Մայր Աթոռում

Ապրիլի 16-17-ը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Օ. Ս. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ Հայ Առաքելական Եկեղեցու ծիսական հարցերի հանձնախմբի հերթական հանդիպումը՝ համաատենադատությամբ Արշակ եպս Խաչատրյանի եւ Կոմիտաս արք. Օհանյանի, մասնակցությամբ Նաթան արք. Յովհաննիսյանի, Գեղամ արք. Խաչեռյանի, Միքայել եպս Աջապահյանի, Գրիգոր Ժ. վրդ. Զիֆթեյանի, Թաթուլ Ժ. վրդ. Անուշյանի: Ժողովի աշխատանքներին մասնակցում էր նաեւ Ծիսահայեցակարգային գրասենյակի պատասխանատու Չաքարիա վրդ. Բաղումյանը:

Մինչ ժողովը հանձնախմբի անդամներին ընդունեց եւ իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հայցելով Տիրոջ գորակցությունը ժողովականներին եւ մարդելով արդյունավոր աշխատանք:

Հանձնախումբը քննարկեց

եւ վերջնական տեսքի բերեց ս. մկրտության արարողության միասնական տարբերակը, մկրտության ծեսին առնչված կանոնական հարցերի ուղեցույցը եւ նախամկրտական ուսուցողական ձեռնարկը:

Այնուհետեւ արձանագրվեց, որ ս. մկրտության արարողության փաստաթղթերի փաթեթն արդեն իսկ առաքվել է Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց դասին՝ սահմանված ժամկետում դիտողություններն ու առաջարկությունները ներկայացնելու համար: Այս առումով հանձնախմբի կողմից որոշվեց սահմանել առաջարկությունների ու դիտողությունների խմբավորման ու

քննարկման կարգ եւ հետագա աշխատանքների ժամանակացույց:

Նկատի առնելով, որ մկրտության արարողության փաստաթղթերի փաթեթը ներկայացվելու է առաջիկա սեպտեմբերի 23-29-ը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում գումարվելիք եպիսկոպոսաց ընդհանուր ժողովի քննարկմանը, հանձնախումբը որոշակիացրեց նաեւ եպիսկոպոսաց ժողովում փաստաթղթի փաթեթի քննարկման կարգը:

Հանձնախմբի հաջորդ հանդիպումը տեղի կունենա առաջիկա հունիսի 26-28-ը՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մայրավանքում:



Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ապրիլի 21-ին՝ Կարմիր կիրակի օրը, Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր տաճարում մատուցվեց ս. Պատարագ, որի ընթացքում կատարվեց քահանայական ձեռնադրություն: Պատարագիչն էր Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեւորգ եպս Սարո-

հանա հայրերին, իր քարոզում անդրադարձավ հայ ժողովրդի եւ Եկեղեցու կյանքում հոգեւորականի կարեւոր դերակատարությանը: Խոսքն ուղղվելով քահանաներին՝ ձեռնադրող սրբազանը պատգամեց. «Մարդկանցից ոչինչ չակնկալեք ձեր առաքելության ընթացքում, Աստծուն դարձրեք ձեզ ապավեն, հիշեք, որ դուք առաքված եք բառիս ամենալայն իմաստով եւ ամենակարեւորը՝ Աստծու կողմից: Այս գիտակցության մեջ է թաքնված



յանը, որի ձեռամբ քահանայական ձեռնադրություն եւ օծում ստացավ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի տասը միաբան սարկավագ:

Պատարագի ընթացքում Գեւորգ սրբազանը քահանայության կոչեց Նորընծաներին՝ օծելով նրանց ճակատներն ու ձեռքերը եւ շնորհելով հոգեւոր Նոր անուններ: Արման սրկ. Վարդանյանը վերակոչվեց Գաբրիել քին., Միքայել սրկ. Մուրադյանը՝ Հրաչ քին., Գոռ սրկ. Հակոբյանը՝ Տիրայր քին., Էդգար սրկ. Սեփանյանը՝ Հարություն քին., Արթուր սրկ. Անդրեասյանը՝ Վանանդ քին., Լեւոն սրկ. Երնշակյանը՝ Աղան քին., Գոռ սրկ. Թարվերդյանը՝ Հեթում քին., Խաչատուր սրկ. Տյումկինը՝ Դեւոնդ քին., Գերասիմ սրկ. Հայրապետյանը՝ Օշին քին., Արմեն սրկ. Սահակյանը՝ Դերենիկ քին.: Ձեռնադրության արարողության ավարտին քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը տվեցին ներկաներին:

Այնուհետեւ ձեռնադրող սրբազան հայրը, շնորհավորելով Նորընծա քա-

ծեր հավատի ուժը, այս ոգու առջեւ փուլավոր եւ բոլոր տեսակի պատկերները, բացելով փակ դռները, այս ներշնչմամբ էր սբ Պողոսը հպարտորեն հայտարարում. «Եթե Աստված մեզ հետ է, ո՞վ կարող է մեզ դեմ լինել»:

Այնուհետեւ Մայր Աթոռի միաբանները, առաջնորդությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, բարձրացան ս. Խորան՝ շնորհավորելու քահանաներին եւ համբուրելու նրանց մյուռոնաբույր ճակատներն ու ձեռքերը:

Նույն օրը՝ երեկոյան, կատարվեց նաեւ վեղարի տվչության արարողություն: Տիրայր, Աղան եւ Դերենիկ քահանաները վեղար ստացան՝ համալրելով Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբանության շարքերը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում քառասունորդ քառասունության եւ աղոթական շրջանից հետո Նորընծաները ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր կառույցներում եւ թեմերում:

Պոեզիայի առաջին միջազգային փառատոնի մասնակիցների այցը Մայր Աթոռ Սբ Էջմիածին



Ապրիլի 16-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում՝ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում, Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Պոեզիայի առաջին միջազգային փառատոնի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի: Ողջունելով փառատոնի մասնակիցների այցը համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ներկաներին:


Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Հայաստանի գրողների միության նախագահին՝ Երեւանում Պոեզիայի միջազգային առաջին փա-

ռատոնի կազմակերպման, ինչպես նաեւ փառատոնը հայոց նվիրական սրբավայր այցելությամբ սկսելու համար:

Վեհափառ Հայրապետը, իր խոսքում անդրադառնալով պոեզիայի բարձր կոչմանը, հորդորեց պոեզիայի մշակներին իրենց աստվածաշնորհ կարողություններն ի բարին ծառայեցնել՝ մարդկության բարօրության, ժողովուրդների միջեւ բարեկամության կերտման համար:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց տարբեր երկրներից ժամանած գրողներին հետաքրքրող հարցերին:

Լրատվական Նյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ



Ա. ԶԱՓԱԾՈՒ

Սկիզբը՝ 2012-ի թիվ 23-24, 2013-ի թիվ 1-7
 Ժողովրդի պատմական ճակատագիրն արծարծող լայն կտավի երկրորդ հանդես եկավ եւ **Վ. Դավթյանը**։ Նա եւս գրեց Մաշտոցի ու Կոմիտասի մասին («Ասք Մաշտոցի մասին», «Կոմիտաս»), պատկերեց ժողովրդի կյանքն ու ազատագրական պայքարը միջնադարյան Հայաստանում («Թնդարկեցիներ»), սուզվեց ժամանակների խորքը եւ ոգեկոչեց պատմության «աստեղային» պահերը մեկնող դրվագներ («Ասք սիրո ու սրի», «Ծուխ ծխանի», «Ճերմակ ձիավորը»), քնարական վերապրումով հայացք ուղղեց ժողովրդի մոտիկ անցյալին («Հայերգություն», «Բայց ծնվեցի», «Ռեքվիեմ», «Երգի ծնունդը», «Ասք Սարգսյանի պատի», «Հայաստան-88» պոեմները, «Ծննդավայր» շարքը)։

Թե՛ Մաշտոցի, թե՛ Կոմիտասի եւ թե՛ «Չվարթնոց» պոեմի Անանուն ճարտարապետի կերպարներում Վ. Դավթյանը փորձում է հայտնաբերել ազգային գրի, երգի, կառուցողական հանճարի ոգեղեն ուժը, որը ձեւ ու կերպարանք է տվել ժողովրդի նկարագրին։

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (Հափաժո, արձակ, թատերգություն)

Ասքերում, որոնք բնույթով պոեմի տարատեսակ են, բանաստեղծը ոգեկոչում է պատմության հնագույն շրջաններին վերաբերող դրվագներ, կերպավորում առասպելական հերոսների եւ պատմական գործիչների՝ ժամանակների միջից ներկա օրվան բերելով պատմության խորհուրդը։

Կարեւորն այն է, որ բանաստեղծը ջանում է չկտրել պատմության թելը, որի մի ծայրը լեգենդների մեջ է, իսկ մյուս ծայրը՝ ներկա օրվա։ Այդ երկու ծայրերից եկող «հոսանքներն» անցնում են բանաստեղծի սրտի միջով։ Դա նրան մե՛կ մղում է վիպական նկարագրությունների, մե՛կ՝ քնարական գեղումների, մե՛կ էլ՝ ընդհանրացնող խորհրդածությունների։ Ստեղծվում է պատմության ընթացքն անհատականացնող քնարական հերոսի մի կերպար, որը հեղինակային պատկանելություն ունենալով՝ ունի նաեւ ընդհանրացնող ուժ։ Այդպիսին են հատկապես «Բայց ծնվեցի» պոեմը եւ «Ծննդավայր» շարքը։ Առաջինը ժողովրդի դժվարին հարատեւության խորհուրդն է բերում, երկրորդը մեկնում այդ հարատեւության հոգեբանական ազդակները՝ հիմնականում ունենալով հեռավոր մնացած ծննդավայրի հուշը եւ հայրենի տան կարոտը։ Ծննդավայրը, ի վերջո, սրբացվում է եւ զուգարկվում անկեղ մորենու առասպելական խորհրդանշանին։ Հայրենի եզերքի կարոտը բանաստեղծի հոգում այրվում է, ինչպես անկեղ մորենին, որը թեւ բոցավառ կրակների մեջ է, բայց երբեք չի մոխրանում։

Ամբողջությամբ Վ. Դավթյանի հայրենասիրական պոեզիան համահունչ է ժամանակի գեղարվեստական որոնումներին եւ միաժամանակ՝ այդ ուղղությամբ հայ պոեզիայի ստեղծած դարավոր ավանդույթներին։

Ժամանակը տրամադրում էր անկեղծ ու ճշմարիտ խոսակցության՝ ժողովրդի անցած ճանապարհի եւ ներկա օրվա մասին։ Պ. Սեւակի «Անլուր զանգակատուն», Վ. Դավթյանի «Թնդարկեցիներ», Ս. Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմները դեռեւս 1950-ական թթ. վերջերին եւ 1960-ական թթ. սկզբներին ստեղծել էին այն հենակետերը, որոնք նպաստեցին հետագա տարիների հայրենասիրական պոեզիայի զարգացմանը։

Այս տեսակետից ուշագրավ են **Ս. Կապուտիկյանի** «Արարատյան համանվագ», «Տպավորություններ սփյուռքից» շարքերը եւ շարքերից դուրս մի քանի բանաստեղծություններ՝ գետեղված «Դեպի խորքը լեռան» եւ «Ձմեռ է գալիս» գրքերում։

Ինչպես բոլոր հայ բանաստեղծները, այնպես էլ Ս. Կապուտիկյանը, Արարատը դիտում է որպես հայ ժողովրդի գոյության խորհրդանշան եւ նրան խոսք ուղղելով՝ գրուցում իր ժողովրդի պատմական ճակատագրի մասին։ Հայրենիքի հազարամյա դժվարին սիրո ծանրությունը կրող մարդ-անհատը եւ անհոգ, թեթեւ, անձնական երջանկություն երազող մարդ-անհատը կանգնում են դեմ հանդիման։ Միեւնույն մարդու մեջ տեղի ունեցող այդ երկվությունը խռովք է առաջացնում։ Հայրենիքի դժվար պատմությունը եւ այդ պատմությունը Եւրոպայի մեջ կրող անհատը կարծես ճշտում են փոխադարձ հարաբերությունն ու կապը։ Ինքնաժխտումն ու ինքնահաշտեցումն ավարտվում են ազգային ճակատագրի հանդեպ խորին պատասխանատվության վերականգնմամբ։ Մարդ արարածը դիտվում եւ գնահատվում է ժողովրդի ու պատմության շարունակության մեջ, որից դուրս

դադարում է ազգային դիմագիծ ունենալուց եւ վերածվում համաշխարհաքաղաքացու։ «Երկիր՝ Հայաստան, Դու դժվար իմ սեր» խոստովանությամբ է ավարտվում «Խռովքը»։

Նշված շարքերում շարունակվում է ազգային եւ համամարդկային նուրբ զուգակցումը։ Սրբազան լեռը՝ Արարատը, որին շարունակում է խոսք ուղղել բանաստեղծուհին, դառնում է ոչ միայն ազգային ոգու գոյության պատվար, այլեւ մարդկային կեցության բարոյական բարձր օրենքների պահպանման չափանիշ։ Ահա այդ զգացողությամբ է, որ նա ասում է. «Օ՛ր, լյա՛ռն Արարատ, Կերպավորի՛ր ինձ ըստ քո պատկերի» («Աղոթք Արարատին»)։ Առասպելական սարն այս դեպքում դիտվում է իբրեւ կատարելության չափանիշ, իսկ մեկ այլ գործում («Ընդդիմախոսություն») իմաստավորվում որպես հզոր ոգեղեն ուժ։ Այստեղից էլ եզրակացությունը. «Երկիրը մեծ է ոգո՛ւ մեծությամբ, Իսկ բանաստեղծը բարձունքն է ոգու» («Բալկար բանաստեղծ Կայսին Կուլիեւին»)։

Նույն այս տեսանկյունից է հայրենիքի ոգին բացվում նաեւ մյուս շարքերում, որոնց մեջ խոսքի նյութը դարձյալ ժողովրդի պատմությունն է եւ այդ պատմությունը կերտող ոգեղեն հզոր ուժի տեր անհատը («Մենք», «1965 թվական, ապրիլի 24», «Հաճախանք», «Քելե՛, լաո՛», «Մուշեղ Գալշյանի հիշատակին» եւ այլն)։ Հայրենիքի հանդեպ սերը, ի վերջո, վերածվում է սիրահարվածության եւ ծնունդ տալիս այսպիսի տողերի. «Հայաստան՝ աշխարհ, Դու մե՛րը եղար եւ մե՛րը չեղար, Դրա համար էլ մենք քեզ սիրեցինք սիրահարի՛ պես...» («Մեր սերը»)։

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԿԱՌՈՂՄԿՈՄՆԵՐ ՄԻՍԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆԺԻ (1763-1780)

Սկիզբը՝ էջ 3
 Պատմական մասից հետո «Ջամբռը» տալիս է վիճակագրական ծանոթություններ ու տվյալներ։ Նշված են հայաբնակ վայրերը, նվիրական տարածաշրջանները։ Օսմանյան կայսրությունում Հայոց Եկեղեցու վիճակները տասը նվիրակությունների են բաժանված։ Դրանք են. 1. Կ. Պոլիսը՝ իր շրջակայքով, 2. Ադրիանուպոլիսը (որի մեջ են Ադրիանուպոլիս, Ռոդոսթոյի, Պրուսայի, Բանդարմայի, Զյոթափայի, Բիլեջիքի, Յալովայի եւ Լիկոմեդիայի վիճակները), 3. Դրիմը (որի մեջ են Բեսարաբիան, Վալաքիան, Մոլդավիան եւ Բուլղարիան), 4. Եվրոպիան (որի մեջ են Արաբկիրի, Ալնի, Սեբաստիայի, Կեսարիայի, Յոզղատի, Ամասիայի եւ Ջանկիի վիճակները), 5. Անկյուրիան (որի մեջ են Աֆոն-Կարահիսարի, Զոնիայի, Կարամանի եւ Բուրսոյի վիճակները), 6. Կարինը, 7. Կարսը (որոնց սահմանները ճշտված չեն Երեւանցու կողմից, սակայն ըստ նրա հիշատակարանի՝ Կարինն ընդգրկել է Բասենի, Դերջանի, Երզնկայի, Կամախի, Ղուզիջանի, Շապին-Կարահիսարի, Թամ-գարայի, Տրապիզոնի, Սյուրմենեի, Գյումուշխանեի, Սպերի, Զոլի, Խոտորջուրի, Օլթի, Լարմանի եւ Ալաշկերտի վիճակները, իսկ Կարսը՝ Կաղզվանի, Ախլաթայի, Ախալքալաքի, Արտանու-

ջի, Արտահանի, Արդվինի եւ Չըղըրի վիճակները), 8. Բայազետը, 9. Վանը եւ 10. Էջմիածնի հատուկ տերության գյուղերը (Վաղարշապատ, Եղվարդ, Օշական, Ալիբեկլուն, Դոդսը, Փարաբար, Գյուլդամբեթ, Կավակերտը, Արպասը, Զյալարան, Սուրմարին, Կողբը եւ Ալեթուն)։ Նվիրակության արդյունքները գանձվում էին երեք տարին մեկ անգամ, իսկ մի շարք վայրերում՝ յուրաքանչյուր տարի հավաքում էին նաեւ յուղ, պանիր եւ մատաղացու։ Դրանք էին. Բայազետը, Վանը, Կարսը, Գեղարքունիքը, Լոռին, Տփղիսը, Նախիջեւանը, Դավրեժը եւ Գյանջան (Գանձակը)։ Վիճակագրական տվյալները տրված են երեք գլխում՝ սկսած հինգերորդից։ Այստեղ խիստ ակնարկներ կան Երուսաղեմի եւ Կ. Պոլսի աթոռների դեմ, որոնք օգտագործում են «պատրիարք» անվանումը։ Բացատրված են այցելությունների ժամանակ եւ թղթակցությունների մեջ կաթողիկոսի գործածելիք եւ նրան ուղղվելիք պատվագիր ձեւերը։ Եվ վերջապես 10-րդ գլխում խոսվում է Աղվանից կամ Գանձասարի, Աղթամարի եւ Կիլիկիայի կաթողիկոսությունների մասին՝ մշտապես ընդգծելով նրանց ստորադաս լինելը Էջմիածնի նկատմամբ։

«Ջամբռի» գերակշիռ մասը պարունակում է մանրամասն տեղեկություններ՝ Մայր Աթոռի հա-

Մոզգոկը, Նոր Նախիջեւանը եւ Դրիմի՝ օսմանցիներից խլված մասը, 6. Էջմիածնի հատուկ տերության գյուղերը (Վաղարշապատ, Եղվարդ, Օշական, Ալիբեկլուն, Դոդսը, Փարաբար, Գյուլդամբեթ, Կավակերտը, Արպասը, Զյալարան, Սուրմարին, Կողբը եւ Ալեթուն)։ Նվիրակության արդյունքները գանձվում էին երեք տարին մեկ անգամ, իսկ մի շարք վայրերում՝ յուրաքանչյուր տարի հավաքում էին նաեւ յուղ, պանիր եւ մատաղացու։ Դրանք էին. Բայազետը, Վանը, Կարսը, Գեղարքունիքը, Լոռին, Տփղիսը, Նախիջեւանը, Դավրեժը եւ Գյանջան (Գանձակը)։ Վիճակագրական տվյալները տրված են երեք գլխում՝ սկսած հինգերորդից։ Այստեղ խիստ ակնարկներ կան Երուսաղեմի եւ Կ. Պոլսի աթոռների դեմ, որոնք օգտագործում են «պատրիարք» անվանումը։ Բացատրված են այցելությունների ժամանակ եւ թղթակցությունների մեջ կաթողիկոսի գործածելիք եւ նրան ուղղվելիք պատվագիր ձեւերը։ Եվ վերջապես 10-րդ գլխում խոսվում է Աղվանից կամ Գանձասարի, Աղթամարի եւ Կիլիկիայի կաթողիկոսությունների մասին՝ մշտապես ընդգծելով նրանց ստորադաս լինելը Էջմիածնի նկատմամբ։

«Ջամբռի» գերակշիռ մասը պարունակում է մանրամասն տեղեկություններ՝ Մայր Աթոռի հա-



սույթների, կավածքների, ունեցվածքի եւ ապահովության մասին։ Դրանք էլ գործի բուն նպատակն են կազմում։ 13-րդ գլխում տրվում են Մայր Աթոռի մլբատու գյուղերը, որոնցից Էջմիածնի վանքը մուլք էր ստանում, այսինքն՝ տասանորդ, եւ նշվում են դրա ստացման ձեւերը։ Այդ գյուղերն էին. Վաղարշապատ, Օշական, Ֆռանկանոցը, Մաստարան, Զիրազլուն, Մուղնին, Դիպալուն, Զեղիշենցը, Նորագեղը, Նորքը, Եղվարդը, Յալին եւ Ամիրին, Մելիքին, Բաթինցը, Բոխենիսը, Եսպանիսը, Դարադոյուն, Աշտարակը, Աղավնատունը, Նորագավիթը, Բյուրականը եւ Հաջիլարը։ 14-րդ գլխում քննարկվում են Էջմիածնի ապահովության արտոնությունները։ Այնուհետեւ՝ հաջորդ գլխում, տրվում են վանքի անտառների, վարելահողերի եւ արոտավայրերի վերաբերյալ տեղեկություններ։ Մեկ այլ գլխում էլ նշվում են այգիները, պարտեզները, այգետեղերը եւ այլն։ Հատուկ գլուխ է նվիրված ջրերին, առուներին, ծովակին կամ լճին։ Այնուհետեւ

խոսվում է տների, խանութների, ճորտերի եւ այլնի մասին։ 20-րդ գլխում պետական իշխանություններից ստացված պաշտոնագրերի, հրովարտականների ու հրամանագրերի ցուցակն է, որը գրելիս նրա հոգին դուրս է եկել, քանի որ շատ հրամաններ, որ հույս ուներ գտնել, այդպես էլ չգտավ։ Այս գլխում տարբեր լեզուներով տրվում են դաբալաները եւ վախուքնամաները, այլ խոսքով՝ նվիրատվությունների պաշտոնագրերը։ Վերջին գլուխը նվիրված է Երեւանի վանքերին։ Հիշատակվում են Գեղարդավանքը, Հավուցթառը, Խորվիրապը, Աղջոց վանքը, Գետարգելը, Կարենու վանքը, Մաքեյնյացը, Խուբավանքը, Կեղառիսը, Հայրենավանքը, Շղվանքը, Սեւանը, Բջնին, Դիպալը, Գոշը, Տեղերը, Սաղմոսավանքը, Հովհաննավանքը, Նիզը, Մողուն եւ Անանիա առաքյալի վանքերը։ «Ջամբռը» հիասքանչ փաստաթուղթ է Մայր Աթոռի կացության մասին։

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր

Հայկական թեմաների մարմնավորումը Փիթեր Նաջարյանի երկերում

Ամերիկյան գրականության մեջ յուրօրինակ տեղ է գրավում Փիթեր Նաջարյանը, գրող, որը չարժանացավ պատշաճ ուշադրության ընթերցող հասարակայնության կողմից, սակայն շարունակեց ստեղծագործել եւ գրել հայկական թեմաներ մարմնավորող ուշագրավ երկեր: Մինչեւ Փիթեր Նաջարյանի ստեղծագործություններին անդրադառնալը հակիրճ ներկայացնենք նրա կենսագրությունը: Ամերիկահայ գրողը ծնվել է 1940 թ. ԱՄՆ-ի Նյու Ջերսի նահանգում: Ապագա արձակագիրն ուսանել է Ռուտգերսի համալսարանում, սակայն չի ավարտել ուսումնառությունը: Այնուհետեւ մեկնել է Գրինվիչ Վիլիջ, ապա՝ Լոնդոն: 1967 թ. Փիթեր Նաջարյանը դարձել է Սթենֆորդի գրական ընկերության անդամ: Այժմ գրողը բնակվում է ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Բերքլի քաղաքում: Փիթեր Նաջարյանի գրչին են պատկանում մի շարք գրական երկեր, որոնցից առավել հայտնի են «Ուղեւորություններ» եւ «Հիշողության դուստրերը» վեպերը:

Նկարագրելով իր առաջին վեպը՝ «Ուղեւորություններ»-ը՝ Փիթեր Նաջարյանը իրավացիորեն այն բնութագրում է իբրեւ «Երիտասարդ մարդու գիրք» (տե՛ս M. Bedrosian, The Magical Pine Ring: Culture and the Imagination in Armenian/American Literature,

Wayne State University Press, 1991, էջ 116): Ինչպես կարելի էր ակնկալել, գիրքը միանշանկորեն չընդունվեց ընթերցողների կողմից: Այսպես օրինակ՝ միջին տարիքի մի հայազգի կին ընթերցող խիստ բացասական գնահատական է տալիս Փիթեր Նաջարյանի վեպին. «Այդքան շատ գեղեկաբանություններ: Ես ոչ մի լավ բան չեմ տեսնում այդ գրքում» (տե՛ս M. Bedrosian, նշվ. աշխ., էջ 116): Այն, որ վերը հիշատակված ընթերցողը ոչ մի լավ բան չի տեսնում Փիթեր Նաջարյանի «Ուղեւորություններ» վեպում, անկասկած, չափազանցություն է, իսկ նրա խիստ քննադատությունը, ակներեւաբար, հանդիսանում է սուբյեկտիվ ընկալումների արդյունք: Ընթերցողն իրավացի է զուտ այն հարցում, որ ամերիկահայ գրողը բնավ չի խորշում գեղեկ բառեր եւ արտահայտություններ կիրառելուց: Այս առումով Փիթեր Նաջարյանը շատ նման է ամերիկահայ գրող Ջեյմս Զայանին, որը եւս գեղեկաբանություններ է օգտագործում իր «Մամիգոն» վեպում: Ի դեպ, նշենք, որ նման «ցածր» բառապաշարի կիրառումը բնավ արտառոց երեւոյթ չէ ամերիկյան գրականության մեջ: Եղել են շատ հայտնի ամերիկացի գրողներ, ովքեր ազատորեն կիրառել են գեղեկաբանություններ, ժարգոնային բառեր ու ար-

տահայտություններ եւ ոչ մի պարսավելի բան չեն տեսել դրանում: Որպես օրինակ՝ կարելի է բերել Էռնեստ Յեմինգուեյին եւ Կուրտ Վոնեգուեյին: Այժմ հարց է առաջանում. եթե բազմաթիվ ամերիկացիներ խնդիր չեն տեսնում անցեւոր բառապաշար կիրառելու մեջ, ապա ինչո՞ւ շատ հայ ընթերցողներ չեն ընդունում դա: Պատասխանն ակնհայտ է. հայերն առավել պահպանողական են եւ առաջնորդվում են զանազան տաբուներով, իսկ միջին ամերիկացին ավելի անկաշկանդ է իր մտածելակերպով եւ զուրկ այն բարդություններից, որոնք այնքան բնորոշ են մեր ազգին: Ասվածից թող չստեղծվի այն թյուր տպավորությունը, թե լեզվական սանձարձակությունը գրական ստեղծագործության մեջ դրվատելի երեւոյթ է: Իհարկե՝ ո՛չ: Բայց եւ այնպես փորձենք հասկանալ, թե ինչու են ցեղասպանության թեման արժարժան որոշ հայազգի գրողներ, այդ թվում՝ Փիթեր Նաջարյանը, կիրառել մի շարք գեղեկաբանություններ: Այս իրողության բացատրությունը, գուցե թե, պետք է որոնել ցեղասպանություն վերապրածների ու նրանց ժառանգների հոգեվիճակի մեջ: Եղեռնագործ թուրք ազգի հանդեպ ատելությամբ ու չարությամբ լցված եւ աշխարհի անարդարությունից վրդովված ու վիրավորված հային, թերեւս,




փոքր-ինչ դժվար է իրեն համակած հույզերն արտահայտել բարեկիրթ ու բարձրաշխարհիկ բառապաշարով: Իսկ Փիթեր Նաջարյանն իր անցեւոր բառապաշարով կարողանում է փայլուն կերպով արտահայտել հայի ծանր հոգեբանական ճգնաժամը:

Փիթեր Նաջարյանի ու նրա գրական գործունեության մասին առավել ամբողջական եւ օբյեկտիվ պատկերացում կազմելու համար ծանոթանանք մի շարք այլ կարծիքների: Սփյուռքահայ գրողի եւ նրա «Ուղեւորություններ» վեպի մասին մեծ դրվատանքով է խոսել Մարկ Մալխասյանը: Ահա թե ինչպե՛ս է նա բնութագրում ամերիկահայ գրողին եւ նրա «Ուղեւորություններ»-ը. «Իմ վերջին հերոսը Փիթեր Նաջարյանն է՝ հանճարեղ, խռովարար, խենթ եւ ծախողակ: Նա հասկանում է հայերին: Նա նրանց չափազանց լավ է հասկանում, եւ 1971 թ. այդ մեծ գիտելիքի պոռթկման արդյունքում ծնվեց «Ուղեւորություններ» վե-

պը: Վերջինս սիրո գիրք է, բայց Նաջարյանը խոսում է մոլեգնած սիրահարի ձայնով: Նա խոսում է ջղայնությամբ, ատելությամբ եւ աչք ծակող ազնվությամբ: Այժմ նրա գրքերի մեծ մասը խնամքով թաքցված են Հայկական համընդհանուր բարեգործական միության պահոցում: Ոչ ոք այդպես էլ չարձագանքեց Նաջարյանի զգացմունքային պոռթկմանը» (տե՛ս M. Bedrosian, նշվ. աշխ., էջ 116):

Ավելորդ չենք համարում հավելել, որ Մարկ Մալխասյանը բնավ միակ գրաքննադատը չէ, ով բարձր է գնահատել Փիթեր Նաջարյանին: Վերջինիս մասին մեծ դրվատանքով է խոսել նաեւ Մարգարիթ Բեդրոսյանը, որն ասել է հետեւյալը. «Փիթեր Նաջարյանը ո՛չ խենթ է եւ ո՛չ էլ ծախողակ: Նա խորաթափանց մարդ է, որն ունակ է տեսնելու պատմությունը ծովատող բեռներից դուրս» (տե՛ս M. Bedrosian, նշվ. աշխ., էջ 116-117):

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 5

Հայաստանի գեղարվեստական կերպարը բնաշխարհիկ զգայություններից եկող յուրահատուկ բնութագրեր ունի **Յ. Սահյանի** պոեզիայում: Նա հայտնաբերեց հայրենի եզերքի իրական ու ոգեղեն կերպարը, որը ծննդավայրի տեղային զգացողությունից հասնում է ժողովրդի պատմականորեն ձեւավորված հոգեբանության: Սահյանը հայ պոեզիայի «հայկականությունը բացահայտող» (Վ. Մնացականյան) բանաստեղծ է, որն ստեղծեց Հայաստանի առանձնահատուկ մի կերպար: Իրավացի էր Ա. Մարգարյանը. «Սահյանը խորապես ազգային բանաստեղծ է: <...> Նա իր «հայությունը» չի ցուցադրում, չի ընդգծում» (Ա. Մարգարյան, Լեռներս գնում, մտնում են երկինք, «Գրական թերթ», 1970, թիվ 42):

Սահյանի հայրենապատումն սկսվում է հայրենի եզերքի մանրամասն ու ճշգրիտ զգացողությունից, որը նախաստեղծ ժամանակներից եկող եւ հարատեւող իր նկարագրով դառնում է աշխարհի պատկեր: Հայրենիքը հիշողության երկու եզերքի մեջ է, որի մի ծայրին պատմության սկիզբն է, մյուս ծայրին՝ բանաստեղծի

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

մանկության սկիզբը: Պատմության շերտերով, բնաշխարհի գույն ու գծով հայրենիքն աննկատ ներծծվում է բնարական հերոսի կենսագրության մեջ եւ դառնում նրա բախտն ու ճակատագիրը. «Եվ դու այնքան ես հայ ու Հայաստան, որ մինչեւ անգամ Հայաստանից դուրս ըն անցած բոլոր ճանապարհները Հայաստանոտ են...» («Ըն շրթունքները Հայաստանոտ են...»): Բնաշխարհի ու պատմության միջեւ՝ որպես հոգեմիջնորդ, կանգնում է մարդը՝ որպես բնաշխարհից ու պատմությունից ծնված տասնյակ հազարավոր տարիների գոյացություն («Հայաստան, անունդ տալիս», «Այն աշխարհից»): Ու բնական է, որ քարե բնաշխարհի կենսագիրը պիտի դառնա «քարե ծիչ» ու «քարե բողոք» են ասի. «Մեր բաժինն աստված, քո սիրուն էլ քար էր, որ մեզ քարերը տվիր նվեր...» («Ուր որ նայում եմ...»): Ահա բնաշխարհի անհատականացված կերպավորման այս սկզբունքն է, որ տեղանքը, պատմությունը դարձնում է հայրենիք, իսկ մարդուն՝ նրա հետ հավերժորեն կապված անբաժանելի ու ոգեղեն մասնիկ («Ախր ես ինչպե՛ս...»):

Ախր ես ինչպե՛ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՛ս ուրիշ տեղ մնամ:
Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
Սեփական հոգին խորովել չկա...

Տարբեր ձևերի մեջ հայրենասիրական պոեզիան ուշագրավ արտահայտություններ ունեցավ նաեւ ժամանակի մյուս բանաստեղծների երկերում:

«Սպասում եմ քեզ» (1969) գրքում **Ն. Չարյանը** գտնելից «Անք Երեւանի», «Անք ի խորոց սրտի», «Անք Անդրանիկ գորա-

վարի», «Անք Եւթյան» գործերը՝ վերանայելով թե՛ իր հայացքը պատմության հանդեպ եւ թե՛ փորձելով այն իմաստավորել իր ժողովրդի պատմական բախտի տեսանկյունից: Այս առումով ուշագրավ են նաեւ «Ապրեմ-չապրեմ», «Հայկական աղեղ» բանաստեղծությունները, «Յորենի դեզ» պոեմը: Ապրեմ-չապրեմ ծաղիկը նրա համար դառնում է լինել-չլինելու ճանապարհն անցած իր ժողովրդի ճակատագրի խորհրդանիշ: Միեւնույն ժամանակ նա շարունակում է նախկին տասնամյակների ոգով փառաբանել իր կառուցվող հայրենիքը: «Պոեմ անավարտ», «Երեւունի-Երեւան», «Այս տունը», «Թռչներ», «Հանքավան» գործերի համար բնաբան կարող են լինել իր իսկ այս տողերը. «Իսկ ես... չեփորն եմ ես իմ այս Հայաստանի <...> ես կառուցման բերկրանքն ինչպե՛ս չորոտամ» («Անք Երեւանի»):

Հայրենիքի անցյալն ու ներկան կենսագրական մեկ պահի մեջ որսալու զգացողությամբ են գրված **Գ. Էմինի** «Ես հայ եմ», «Ախ, այս Մասիսը» շարքերը: Էմինի բնարական հերոսն անձնավորում է հայի հավաքական կերպարը: Դա մղում է նրան անվարան ասելու. «Բարեկամ, մեկնիր ինձ քո ձեռքը, Սա իմ երկիրն է, իսկ ես՝ Նաիրին» («Ձեռքը»): Ժողովրդի պատմական ճակատագիրը նա արտահայտում է այսպիսի պատկերով. «Մենք փո՛քր ենք, այո՛, Ձեզ ո՛վ էր ասում Մեզ սեղմե՛ք այնքան, որ մենք ստիպված... աղամա՛նդ դառնանք» («Մենք»): Սա բնավ էլ չի գալիս ազգային բացառիկության զգացողությունից, այլ այն պարզ ճշմարտությունից, որ «խնձորենու ստվերն անգամ չի տեղավորվում» հայրենի հողում՝ նրա փոքրության պատճառով («Խնձորն իր ծառից հեռու չի ընկնում»): Իսկ փոքրը, ըստ Էմինի, գոնե

պիտի աղամանդի խտացում ու փայլ ունենա, որ չկորչի:

Հայրենիքի կերպարն Էմինն ուրվագծում է նաեւ ժամանակակից հայ մարդու, հայկական բնապատկերի բնութագրական գծերի խտացումով (Տխուր քեֆ», «Նաիրի», «Խաղողի որթը», «Գեղարդի վանքը», «Սասունցիների պարը»): Հայն ու Հայաստանը դրանցում երեւում են մե՛կ տխուր երգերով, մե՛կ մարտական պարի շաչյունով, մե՛կ խաղողի որթի տոկունությամբ, մե՛կ Գեղարդի վանքի ասես անձեռակերտ գեղեցկությամբ: Ոչ քիչ թվով բանաստեղծություններում Էմինը խոսում է նաեւ սփյուռքի հայության տխուր ճակատագրի մասին: Սեղմվածությունից աղամանդ դառնալու պատկերին այս դեպքում փոխարինում է աստղերի պես ցրվածության պատկերը («Մենք», «Չարմանալի է, որ ես չեմ եղել...», «Երգ կռուկի մասին», «Սփյուռքի տխուր բարեկամիս» եւ այլն):

Հայրենիքի պատմությունն իբրեւ ժամանակակից հայ մարդու պատմականացված կենսագրություն են դիտում նաեւ մյուս բանաստեղծները՝ **Գ. Մահարին** («Բալլադ կատվի մասին»), **Խ. Դաշտենցը** («Հին ռանգապարները», «Հայ գեղջկուհին»), **Հ. Հովհաննիսյանը** («Անմահություն»), **Մ. Մարգարյանը** («Արարատյան», «Սփյուռքի բարեկամներիս» շարքերը): **Պ. Սեւակի** «Ալեյնի գանգակատան» հզոր շունչը ծնունդ տվեց առանձին պոեմների, գրքերի ու շարքերի, որոնցից են **Ռ. Դավոյանի** «Ռեքվիեմը» (1969), **Լ. Միրջանյանի** «Երգի հովիվը» (1969), **Լ. Դուրյանի** «Մաշտոցը» (1976): Հայրենասիրական պոեզիան գրական տարբեր տեսակների մեջ կերպավորվեց նաեւ շատ այլ հեղինակների ստեղծագործությունների մեջ:

Դավիթ ԿԱՊՊՐԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՐԸ ՄԿԻԶԲԸ Ե ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ...

**«Մի փնտրիր անմահություն՝ ծնված լինելով մահկանացու»
(Սբ Հովհ. Ոսկեբերան)**


Գաղտնիք չէ, որ մահը միշտ էլ վախի գգացումով է համակել մարդուն: Ինչո՞ւ մահն այնքա՜ն խորթ ու անբնական է մարդկային բնությանը: Ի սկզբանե Աստված մարդուն անմահ էր ստեղծել: Աստծո պատկերով եւ նմանությամբ ստեղծված մարդը չէր ստեղծվել մահանալու համար, սակայն մեղք գործելով իր Արարչի հանդեպ եւ խախտելով պատվիրանը՝ մարդը դարձավ մահկանացու, որովհետեւ «մեղքի վարձը մահն է», - ինչպես ասում է սուրբ Պողոս առաքյալը (Հռոմ. 2 23): Սբ Գր. Տաթևացին ասում է, որ թեև մեր նախահայր Ադամն ապրեց շուրջ 930 տարի, սակայն երբ մեղք գործեց, այդ նույն պահին արդեն հոգով հայտնվեց մահվան մեջ, թեև ֆիզիկապես շարունակեց ապրել: Եվ որովհետեւ աղամական մեղքը ժառանգաբար անցնում է սերնդեսերունդ, ոչ մի հոգեղեն եակ չկարողացավ խուսափել մահվանից՝ Տիրոջ խոսքի համաձայն: «Հող էիր եւ հող էլ կդառնաս» (Ծննդ. Գ 19), նաեւ՝ «Ո՞վ է այն մարդը, որ պիտի ապրի ու մահ չտեսնի» (Սաղմ. 2Ը 49): Բայց բազում ողորմ Աստված անկյալ մարդկությանը չթողեց մահվան ճիրաններում, եկավ «փնտրելու եւ գտնելու կորածին»: Քրիստոսով ամեն բան նոր եղավ: Աստվածորդու մարդեղացմամբ եւ փրկագործության խորհրդով մարդն ազատագրվեց մեղքի եւ մահվան իշխանությունից: Քրիստոսի հրաշափառ հարության մեղավոր մարդկության առջեւ վերստին բացվեց հավիտենական կյանքի՝ անմահության ճանապարհը: Քրիստոսով մարդկությունը վերագտավ կորուսյալ դրախտը, որտեղից արտաքսվել էր անհնազանդության եւ մեղքի պատճառով: Ուրեմն՝ Քրիստոսի հետեւորդները՝ քրիստոնյաների համար մահն այլևս սարսափելի չէ, քանի որ Քրիստոսն իր հրաշափառ հարությամբ կործանեց սատանայի իշխանությունը, ավերեց դժոխքը, ազատագրեց գերված հոգիներին եւ մարդկության առջեւ վերստին բացեց երկնքի արքայություն տանող լուսավոր ճանապարհը: «Մահը կուլ գնաց հաղթության: Ո՛ր է, մա՛հ, քո հաղթությունը, ո՛ր է, գերեզման, քո խայթոցը» (Ա Կորնթ. ԺԵ 55): Քրիստոնյա մարդու համար մահն այլևս մի սոսկալի երեւոյթ չէ, որովհետեւ նա գիտի, հավատում է, որ մահվամբ ամեն ինչ չի վերջանում, այլ սկսվում է միայն, որովհետեւ մարդու հոգին անմահ

է: Եվ եթե մահվամբ մարմինը, որ հող է, հող է դառնում, հոգին, որ Աստված է տվել, վերստին Աստծո մոտ է գնում (տե՛ս Ժող. ԺԲ 7)՝ հավիտենական կայաններում սպասելով համընդհանուր հարության օրվան, վերջին դատաստանին եւ մեղավորների եւ արդարների հատուցմանը:

Եկեղեցու սուրբ հայրերն իրենց գրվածքներում հորդորում են ոչ միայն չերկնել մահվանից, այլեւ «մահվան հետ հաշտ ապրել»՝ աստվածահաճո կյանք վարելով, ամեն օր եւ ամեն վայրկյան սպասելով մահվանը: Չե՞ որ չգիտենք այս աշխարհից մեր ելնելու օրը: «Խոհեմ մարդը գիտի, որ յուրաքանչյուր վայրկյանն էլ իր մահվան ժամանակն է», - ասում է Պողոս Ադրիանուպոլսեցին: Աստվածաշունչ մատյանը զգուշացնում է, որ «մարդու օրերի թիվն ինչքան էլ շատ լինի, հարյուր տարի է» (Սիրաք ԺԸ 8): Ոչ ոք հավերժ չի ապրելու այս երկրի վրա: «Մարդու օրերը խոտի պես են... Երբ փչի քամին, նա կանհետանա, եւ նրա տեղն իսկ չի երեւա» (Սաղմ. 102. 15-16): Մահն անխուսափելի է յուրաքանչյուրիս համար, վրա է հասնում անսպասելի եւ հանկարծակի, մահը չի պատկառում ո՛չ ծերի ակտիվությունից, ո՛չ երիտասարդի երիտասարդությունից, ո՛չ մանկան անմեղությունից: Հիշենք Տիրոջ պատմած անմիտ մեծահարուստի առակը (տե՛ս Ղուկ. ԺԲ 13-21): Մինչ մեծահարուստը մտածում էր իր ստացած հսկայական բերքը նոր շտեմարանների մեջ ամբարելու եւ մինչեւ կյանքի վերջն այն վայելելու մասին, Աստված ասաց նրան. «Անմիտ մարդ, այս գիշեր իսկ հոգիդ կառնեմ, ինչ որ պատրաստել ես, ո՛ւմն է լինելու...»: Ուրեմն՝ հոգեղեն մարդը ոչինչ չգիտի իր վաղվա օրվա մասին. վաղվա օրը մերը չէ, ահա թե ինչու է պետք մեր կյանքի ամեն օրը համարել վերջինը, ինչը կօգնի հնարավորինս գերծ մնալ մեղանչումներից եւ սայթաքումներից, ինչպես Սիրաք իմաստունն է ասում: «Հիշի՛ր վախճանդ եւ չես մեղանչի երբեք» (Է 40): Հետեւաբար մեր այս երկրավոր, ժամանակավոր կյանքն էլ տրված է մեզ որպես պատրաստության, այսինքն՝ բարին գործելու, աստվածային պատվիրանների համաձայն ապրելու մի շրջան, որպեսզի երբ գա այս կյանքին հրաժեշտ տալու եւ մահվանը դեմ հանդիման կանգնելու մեր ժամը, չվախենանք ու չզարհուրենք, այլ խաղաղ ու հանգիստ լինենք, քանի որ ապրել ենք մեր կյանքը հնարավորինս ազնիվ ու բարի ընթացքով, Տիրոջ ուղենշած պատգամների համաձայն: Սբ Պետրոս առաքյալը հորդորում է այս կյանքում ապրել որպես պանդուխտներ եւ օտարականներ (տե՛ս Ա


Պետ. Բ 11), քանզի «Մեր քաղաքացիությունը երկնքում է, որտեղից եւ ակնկալում ենք Փրկչին՝ Տիրոջը՝ Հիսուս Բրիստոսին» (Փիլ. Գ 20): Հետեւաբար Քրիստոսի ճշմարիտ հետեւորդն այս կյանքում՝ իրեն տրված այս կարճ ժամանակահատվածում, գանձեր է դիզում երկնքում՝ իր համար դյուրին դարձնելով երկնքի արքայություն տանող ճանապարհը: Սբ Գր. Տաթևացին ասում է. «Մարդու կյանքը 3 վայրկյան է՝ ծնունդ, կյանք եւ մահ: Որքան իմաստուն են այն մարդիկ, ովքեր այս կյանքում ապրում են իբրեւ պանդուխտներ՝ ստանալով երկնքի արքայության քաղաքացիությունը: Եվ որքան անմիտ են այն մարդիկ, ովքեր զրկվում են հավիտենությունից՝ այս երեք ակնթարթն ապրելու համար»: Ուրեմն՝ մահվամբ ամեն ինչ չի ավարտվում, այլ սկսվում է միայն. մահվամբ բացվում են դռները հավիտենության: Մահը վերջն է այս ժամանակավոր կյանքի եւ սկիզբը՝ հավիտենության: Ահա թե ինչու էին բոլոր աստվածահաճո սրբերը փափագում օր առաջ մերկանալ իրենց մեղանչական մարմնից եւ իրենց փափագելի Քրիստոսին միանալ երկնքում: Նրանք քաջաբար մահվան եւ մարտիրոսության էին գնում հավիտենականության հույսով, քանզի գիտեին, որ իրենց բուն հայրենիքը երկինքն է, իսկ այս կյանքը՝ երկնքին արժանանալու մի շրջան, որի վախճանի ինչպիսին լինելը կախված է յուրաքանչյուրիս ապրած կյանքի ընթացքից եւ որակից: Կարողացա՞նք մեր ուժերի ներածին չափով լույս լինել մեր շրջապատում՝ պատճառ դառնալով, որ Աստծո անունը փառավորվի մարդկանց մեջ, եթե այո՞, ապա երկնքի արքայության մեջ էլ Աստված մեզ պիտի լուսավորի եւ պայծառացնի՝ արժանացնելով հավիտենության անսպառ պարգևներին: Խավա՞ր եղանք այս կյանքում՝ անտեսելով բազմազան Աստծո պատգամներն ու մարդասիրական հորդորը, մերժելով Նրա փրկության հրավերը, ուրեմն մեր ժամանակավոր կյանքի ավարտից հետո մեզ կսպասեն հավիտենական խավարը, մեղավորների համար պատրաստված տառապանքները, որոնք կամովին ընտրեցինք մեր չար ու անօրեն ընթացքով: Առաքյալը հստակ ասում է. «Ինչ որ մարդս սերմանում է, նույնը եւ կհնձի. ով սերմանում է իր մարմնի համար, այդ մարմնից էլ կհնձի ապականություն. իսկ ով Հոգու համար է սերմանում, այդ Հոգուց էլ կհնձի հավիտենական կյանք» (Գաղ. 2 8):

Մահվան մասին չխորհրդածենք միայն այն ժամանակ, երբ գտնվում ենք հարագատ-ծանոթների հուղարկավորություն-



ներին կամ լուսն այս կամ այն հայտնի մարդկանց մահվան լուրը, այլ մահվան եւ այս կյանքի անցողիկ լինելու մասին մտորենք ու խորհենք միշտ, քանի որ չգիտենք, թե մահը մեզ ո՞ր տարիքում եւ ե՞րբ «այցի կգա»: Պողոս Ադրիանուպոլսեցին ասում է, որ «գերեզմանատունն այնպիսի դպրոց է, որտեղ մեռյալները սովորեցնում են ապրողներին, համարե՞ր՝ խոսողներին»: Ինչպե՞ս, չե՞ որ նրանք այլևս հող են դարձել եւ միայն նրանց մասին հուշերն են պահպանվել մեր սրտերում: Այո՞, գերեզմանոցում եւ հարազատի շիրմի առջեւ մեղավոր ու անցավոր մարդը շատ բան կարող է սովորել: Եթե ուշադիր լինենք եւ բաց պահենք մեր հոգու ականջը, հստակ կսենք հանգուցյալների՝ մեզ ուղղված պատգամները: Գերեզմանային լուծության մեջ նրանք սովորեցնում են, որ խուսափել չկարողացան անխուսափելի մահվանից, ոչինչ չկարողացան տանել իրենց հետ այս աշխարհից, նրանց չփրկեցին ո՛չ հարստությունը, ո՛չ զանազան պաշտոններ, ո՛չ ճանաչում եւ փառք: Մահվան դիմաց փոշիանում են աշխարհիկ փառքերն ու կոչումները: Մահն աչառություն չի անում ոչ ոքի: Բոլորին էլ նույն՝ գերեզմանի խավար փոսն է սպասում, որը, սակայն, մարդու վերջին հանգրվանը չէ: Ահեղ դատաստանից հետո յուրաքանչյուր ոք կժառանգի այն, ինչ սերմանել է այս ժամանակավոր կյանքի ընթացքում. եթե կյանք է սերմանել, կհնձի հավիտենական կյանքը եւ երկնքի արքայությունը, եթե մահ՝ կհնձի մահ՝ մերժված Տիրոջ ներկայությունից ու ողորմությունից, քանզի «Տերը միայն այս կյանքում է մեղավորի հանդեպ ողորմած, իսկ հանդերձալուս արդարադատ է:

Շարունակությունը՝ էջ 8



Պատմաբան Պետրոս Հովհաննիսյանի աշխատասիրությամբ վերջերս հայագետների սեղանին է դրվել օգտակար ու արժեքավոր մի նոր հրատարակություն՝ «Մովսես Խորենացի. մատենագիտություն» գիրքը:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. «ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

Հայոց պատմահոր երկերի մատենագիտությանը հեղինակն անդրադարձել է նաեւ նախկինում: Մինչ այս՝ տարբեր տարիների, Պ. Հովհաննիսյանի հեղինակությամբ հրապարակվել են ինչպես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի հրատարակությունների, այնպես էլ Խորենացու երկասիրությունների մատենագիտությունները: Այս գրքում մատենագիտական այդ ցանկերը լրացված են ու առավել ամբողջական, առանձնացված է Խորենացու մասին ստեղծված գրականության մատենագիտությունը: Հեղինակն անհրաժեշտ է համարել նաեւ անդրադառնալ Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի հայ եւ օտարագի երկասիրողներին՝ ներկայացնելով նրանց կենսագրական բառարանը:

Գիրքը բաժանված է երեք մասի: Առաջին բաժնում ի մի են բերված Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի առանձին հատվածների, ինչպես նաեւ Խորենացու այլ

երկերի ու Խորենացու վերագրվողների հայերեն (բնագիրը եւ աշխարհաբար տարբերակը) եւ օտար լեզուներով հրատարակությունների մատենագիտական ցանկերը:

Խորենացու այլ եւ նրան վերագրվող երկերի մատենագիտական ցանկերը ներառում են «Աշխարացոյց»-ի, «Գիրք Պիտոյից»-ի, աստվածաբանական-դավանաբանական («Պատասխան թղթոյ Սահակայ», «Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց»), քերականագիտական եւ այլ երկերի, Կեղծ Կալիսթենեսի վերագրվող «Պատմութիւն վարուց Աղեքսանդրին» երկի՝ Մովսես Խորենացու հունարենից կատարած թարգմանության, Խորենացու հոգեւոր երգերի (շարականներ, տաղեր եւ այլն) հրատարակությունների մատենագիտությունը:

Գրքի երկրորդ մասում ներկայացված է Խորենացու նվիրված գրականության՝ 5-17-րդ դարերի մատենագիտական տպա-

գիր աղբյուրների եւ Խորենացու մասին հայերեն, ռուսերեն եւ այլ լեզուներով հրապարակված ուսումնասիրությունների մատենագիտությունը:

Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի հայ եւ օտարագի երկասիրողների կենսագրական բառարանում տեղ է գտել հայ եւ օտար՝ քսանվեց հայագետի կենսագրություն, որոնցից շատերը երբեմն չեն հանդիպել մինչ այս ստեղծված կենսագրական բառարաններում ու հանրագիտարաններում:

Գիրքը հրատարակվել է ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի երաշխավորությամբ: Այսուհանդերձ, հեղինակը չի հավակնում ներկայացված մատենագիտական նյութը սպառված համարելու եւ շնորհակալությամբ պատրաստ է ընդունելու ընթերցողների դիտողություններն ու առաջարկները:

Հեղինե ՄԿՐՏՅԱՆ

Հայկական թեմաների մարմնավորումը Փիթեր Նաջարյանի երկերում

Սկիզբը՝ էջ 6

Լրացնելով Մարկ Մալխասյանի խոսքերը՝ ասենք, որ գրողները հաճախ են կանգնում հանրության կողմից չհասկացված, դեռ ավելին՝ մերժված լինելու խնդրի առաջ: Բայց եւ այնպես սա բնավ չի նշանակում, թե այդ գրողներն իրականում ապաշնորհ են եւ ձախողակ: Համաշխարհային գրականության պատմությունը վկայում է, որ եղել են բազմաթիվ տաղանդավոր գրողներ, որոնք ըստ արժանավույն չեն գնահատվել գրաքննադատների եւ ընթերցող հասարակայնության կողմից: Այս իրողությունը չպետք է զարմանք առաջացնի, քանզի շնորհալի արվեստագետները, որպես կանոն, իրենց մտածելակերպով ու գաղափարներով առնվազն մեկ քայլ առաջ են ընկնում իրենց ժամանակից: Այն գրողները, ովքեր ինչ-որ նորարարություն են կատարում գրականության մեջ եւ դուրս են գալիս կարծրատիպերից ու խախտում են հանրորեն ընդունված բարոյաէթիկական ու գեղագիտական նորմերը, անխուսափելիորեն արժանանում են քննադատության: Բայց ճշմարիտ արվեստագետի ողջ ուժն այն է, որ նա կարողանում է կոտրել հին կլիշեները եւ նոր ուղիներ բացել արվեստի ասպարեզում: Վերջին հաշվով՝ արվեստագետի ամենաարդար դատավորը ոչ թե ժամանակակիցներն են, այլ ժամանակը: Ժամանակակիցները կարող են լինել սուբյեկտիվ եւ աչառու, սակայն ժամանակը միշտ օբյեկտիվ է ու անկողմնակալ:

Վերադառնալով Մարկ Մալխասյանին՝ ասենք, որ նրա դիտարկումները Փիթեր Նաջարյանի մասին միանգամայն ճշմարտացի են: Նա, թերեւս, այն քչերից է, ով կարողացավ ճիշտ հասկանալ Նաջարյան-գրողին, գիտակցել նրա երկերի դերն ու նշանակությունն ամերիկյան գրականության մեջ: Իհարկե, անսխալական գրողներ եւ անթերի գրական երկեր գրեթե չեն լինում: Ցանկացած գրական ստեղծագործության մեջ կարելի է գտնել ինչ-ինչ թերություններ ու բացթողումներ: Սակայն «թերություն» եւ «բացթողում» բառերին հարկ է մեծ զգուշավորությամբ մոտենալ, եթե խոսքը վերաբերում է արվեստին, մասնավորապես՝ գեղարվեստական գրականությանը: Չե՞ որ գրականությունը ոչ թե գիտություն է, այլ արվեստի մի ճյուղ, ուստի եւ այն չի կարող լինել սխալ: Գեղարվեստական գրականությունը մարդու հոգեկան աշխարհի արտացոլումն է: Դրանով արվեստագետն արտահայտում է իր աշխարհայացքը, հույզերն ու զգացմունքները, կիսվում է ընթերցողների հետ իր խոհերով ու մտահոգություններով, ցույց տալիս իր վիշտն ու ցավը, բարոյաէթիկական մոտեցումները եւ գեղագիտական սկզբունքները:

Շարունակելի
Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՄԱՅԸ ՍԿԻԶԲԵՆ Ե ՋԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՆ...



Սկիզբը՝ էջ 7

Այստեղ է նստած ողորմության եւ շնորհի աթոռին, իսկ այնտեղ կնստի դատաստանի աթոռին: Այստեղ է ներում, իսկ այնտեղ դատապարտում է» (սբ. Գր. Տաթևացի):

Մարդկային գոյության ճշմարիտ եւ վերջնական նպատակն Աստծո հետ միավորությունն է հավիտենության մեջ: Ուրեմն չգարհուրենք մահվանից, այլ ամեն ջանք գործադրենք, որ բարի մահվամբ ելնենք այս աշխարհից՝ բարի ու առաքինի հիշատակ թողնելով: Չմերժենք Տիրոջ փրկության հրավերը, հավատաք մահվանից հետո կյանքի գոյության անժխտելի փաստին, քրիստոնեական եւ առաքինի կենցաղով միշտ պատրաստ լինենք մահվան հետ «հանդիպմանը», քանի որ չգիտենք այս աշխարհից մեր կանչվելու օրը: Խնդրենք

Աստծուն, որ մեր սրտի եւ հոգու աչքերի առջեւ միշտ վառ պահի մահվան մասին մտածումը, որպեսզի չլինի թե տարվելով աշխարհիկ ունայն հոգսերով ու զբաղումներով՝ կորցնենք մեր զգոնությունը: Ձանանք այնպես ապրել ժամանակավոր մեր կյանքը, որ երբ այս աշխարհից մեր մեկնելու ժամը գա, չզարհուրենք ու սոսկանք՝ անպատրաստ լինելու պատճառով, այլ համարձակ լինենք Տիրոջ առջեւ եւ բարի մահվամբ ելնենք այս աշխարհից՝ կյանքից անցնելով կյանքի, ինչպես դարձյալ Պողոս Առիանուպոլսեցին է ասում. «Չար մարդիկ մեռնելով՝ աշխարհի առօրյա վշտերից անցնում են դեպի հավիտենական տանջանքները, այսինքն՝ մահվանից դեպի մահ, ինչպես որ բարիները՝ կյանքից դեպի կյանք»:

Ամենա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԳԻՐԷ


Արարատ Բահանա Պողոսյան, Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1974-2008), Ս. Էջմիածին, 2012, 480 էջ:

2012 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական խորհրդի երաշխավորությամբ լույս տեսավ «Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1974-2008 թթ.)» սովորածավալ միահատորյակը, որի հեղինակը (կազմող) Արարատ Բահանա Պողոսյանն է: Նա մի քանի տարի շարունակ (2007-2012) զբաղվել է այդ տարողունակ ու շնորհակալ գործով՝ ամբողջացնելով գիտական շրջանառության մեջ եղած Ս. Կոծինյանի մատենագիտական գիրքը (*Սեդա Կոծինյան, Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի, 1944-1973 թթ.*): Մեր օրերում «Էջմիածին» ամսագրի մատենագիտական ցանկեր կազմելու փորձեր էլի եղել են (Նշան սարկավազ, Անդրանիկ Չեյթունյան), սակայն Արարատ Բահանա Պողոսյանի աշխատանքը ժամանակի առումով անմիջական շարունակությունն է Ս. Կոծինյանի մատենագիտության: Ինչպես «Մուտքում» պատկերավոր նկատել է հատորյակի պատասխանատու խմբագիր Գեորգ Տեր-Վարդանյանը, պարբերականն անհրաժեշտաբար պետք է ունենա իր մատենագիտությունը՝ իր բանալին, «առանց որի նրա պարունակած թանկարժեք նյութի գործածման արդյունավետությունը խիստ ցածր է... մատենագիտություն չունեցող պարբերականը նման է գանձարանի, որի դուռը կողպված է, կողպեքն էլ բանալի չունի»: Այս իմաստով գրքի հրատարակումը խիստ անհրաժեշտ էր, կարելու ու ողջունելի: Որ «Էջմիածին» ամսագիրը թանկարժեք նյութ է պարունակում, բովանդակալից է եւ ունի գիտական անժխտելի արժեք, ի սկզբանե հայտնի է բոլորին: Իր պատմագիտական պրպտումներով կարող է մրցակից լինել

հայագիտական ցանկացած այլ գիտական հանդեսի:

Կրոնական սկիզբ ունենալով ու ծառայելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, դրանով իսկ՝ քրիստոնաւայ աշխարհին, այն միաժամանակ հայագիտական բնույթ է ունեցել՝ իր շուրջը համախմբելով հայագետ ու հայամետ մտավորականներին՝ տասնամյակների ընթացքում հաստատելով իր այդ առաքելությունը: Անշուշտ, շատ կարելու է, որ այն ծառայել ու ծառայում է իր բուն կոչմանը, որ այնտեղ ամենայն մանրամասնությամբ բեկվել ու բեկվում է կրոնական-հոգեւոր բազմաբնույթ կյանքը՝ իր ամեն ծալքերով: Այնտեղ է, որ տպագրվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակները, բարձրաստիճան հոգեւորականության օրհնության գրերը, քարոզներն ու ուղերձները՝ կապված եկեղեցական ու պետական կարելու իրադարձությունների, քրիստոնեական ավանդույթների, ազգային ծեսերի ու նշանակալից այլ խնդիրների հետ: Ամսագրի շնորհիվ ընթերցողը հնարավորություն ունի հասնել լինելու, թե ինչ է կատարվում Մայր Աթոռում, ինչպես նաեւ մեր եկեղեցիների ու վանքերի պատերի ներսում, հասարակական միջավայրում, քրիստոնյա բնակչության առօրյայում:

Եկեղեցին Էկումենիկ կապերով առնչվում է աշխարհի բոլոր եկեղեցիների հետ, մասնավորապես՝ քրիստոնեական: Ամսագիրն արտացոլում է եկեղեցական կյանքում տեղի ունեցող նշանակալի երեւոյթներն ու իրադարձությունները: Անդրադառնում է հայությանը հուզող բոլոր իրատապ խնդիրներին: Դրանով էլ այն անփոխարինելի է հայրենիքի ու սփյուռքի աստվածասեր հասարակայնության համար:



«Էջմիածին» ամսագիրը, հանրապետության հանրահայտ ու լավագույն պարբերականներից լինելով, եկեղեցական բազմազան կյանքին եւ գործունեությանը զուգընթաց, անդրադարձել է հայոց պատմության, ճարտարապետության, գրականության եւ մշակույթի բազմաբովանդակ խնդիրներին: «Առաջաբանում» Արարատ Բահանա Պողոսյանը համառոտակի ներկայացնում է ամսագրի բովանդակությունը: Մատենագիտությունը կազմելիս նա որոշակի ճշգրտումներ է կատարել նախորդի համեմատությամբ: «Բվւր.» սկսվածքով ծանոթագրությունների տակ ամփոփված հոդվածների վերնագրերը բերվել են ոչ թե մասնակիորեն, այլ ամբողջությամբ, ծանոթագրվել են այն հոդվածները, որոնց վերնագրերը լիովին չեն բացահայտում դրանց բովանդակությունը: «Մայր Աթոռ» բաժնում ներկայացվել են նյութերի նկարագրությունները՝ ի տարբերություն նախորդ մատենագրությունների, համառոտ բացատրվել է քարոզների պարունակությունը, նշվել օրը, ամիսը եւ տարին, ցույց է տրվել նաեւ հաղորդագրությունների, հայրապետական վճիռներ

րի, այցելությունների, կարգալուծությունների օրացուցային ժամանակը՝ համապատասխան հրապարակման վերջում:

Ավանդական՝ առարկայական, անձնանունների, տեղանունների ցանկերից բացի, Արարատ Բահանա Պողոսյանը կազմել է հայոց վանքերի ու եկեղեցիների անունների անվանացանկ:

Միանգամայն համաձայն ենք Գ. Տեր-Վարդանյանի առաջարկին՝ կազմելու գիտական ժողովածուներ, ուր ամփոփված լինեն ամսագրի լավագույն, արժեքավոր հոդվածները: Լավ կլինի այդ ժողովածուներից յուրաքանչյուրը թեմատիկ որոշակի ընդգրկում ունենա: Իսկ ամսագրին նվիրված առանձին մենագրական ուսումնասիրություն ստեղծելն այսօր պարզապես անհետաձգելի գործ է, որ շահեկանորեն կհարստացնեք հայ լրագրության պատմությունը:

Արարատ Բահանա Պողոսյանի այս գիրքը գիտական-մշակութային նշանակալից արժեք ունի եւ անվերապահ վաստակել է ամսագրից օգտվողների ու հայագետ մասնագետների երախտագիտությունը:

Հակոբ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Զիմնագիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Զրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ. փոստ՝ qh@etchmiadzian.am
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր.
2.5.2013 թ.
Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ